ՄԵՂՐԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԼՔՎԱԾ ԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՈՒՄ

THE PROBLEMS OF ABANDONED AND ACTIVE SETTLEMENTS IN THE MEGHRI REGION IN THE LAST CENTURY

ПРОБЛЕМЫ ЗАБРОШЕННЫХ И СУЩЕСТВУЮЩИХ ПОСЕЛЕНИЙ МЕГРИНСКОГО РЕГИОНА В ПОСЛЕДНЕМ СТОЛЕТИИ

Կամո Ալեքսանյան
Kamo Aleksanyan
Камо Алексанян

Երևանի պետական համալսարան, Հայաստան
Yerevan State University, Armenia
Ереванский государственный университет, Армения

kamo.aleqsanyan@ysu.am

Ներկայացվել է՝ 10.02.2025; գրախոսվել է՝ 24.06.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 10.02.2025; Revised: 24.06.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 10.02.2025; рецензировано: 24.06.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-199

Ամփոփում – Մեղրիի տարածաշրջանում բնակավայրերի տեղաբաշխման և բնակչության շարժընթացի հիմնահարցերն ունեն ինչպես սոցիալ-տնտեսաաշխարհագրական, այնպես էլ աշխարհաքաղաքական առանձնահատուկ նշանակություն: Սկսած XX դարի քսանական թվականներից մինչև մեր օրերը՝ Մեղրիի տարածաշրջանում տարբեր գործոնների ազդեցությամբ ձևավորված բնակավայրերի մոտ 50 տոկոսը որոշակի ժամանակահատվածում այս կամ այն պատճառով համալրել է լքված բնակավայրերի շարքը: Հիմնական պատճառները մի քանիսն են՝ 1. գյուղերի խոշորացումը խորհրդային տարիներին, 2. լեռնահանքային արդյունաբերության բուռն զարգացումը, 3. կուլտուր-կենցաղային վատ պայմանները, մշակութային ակտիվ կյանքի բացակայությունը, 4. մասամբ բնական աղետները (երկրաշարժեր, սողանքներ, սելավներ, էրոզիոն պրոցեսներ), 5. կենսաբազմազանության խախտումը, անտառային տարածքների կրճատումը, հողերի դեգրադացումը, 6. գյուղատնտեսական աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպումը, արոտավայրերի գերարածեցումը, ոռոգման նորմերի խախտումը, 7. շրջակա միջավայրի էկոլոգիան, ճառագայթման բարձր ֆոնը: Այդ լքված բնակավայրերն են՝ Բուղաքար, Վանք, Կալեր, Մալև, Արևիք, Ափկեզ, Մուլք, Ամրաքար, Թաղամիր, Թեյ, Թոս, Մնաշու, Փուշկագ, Էրնաձոր, Մարզկիթ և Թեղուտ: Ներկայումս գոյություն ունեցող բնակավայրերը 15-ն են՝ երկու քաղաք (Ագարակ և Մեղրի) և 13 գյուղ (Ալվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան,

Կուրիս, Նոնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Տաշտուն, Վարդանիձոր, Թխկուտ, Այգեձոր): Մեր օրերում այս բնակավայրերի կարևորությունն ավելի է ընդգծվում՝ պայմանավորված Մեղրիի տարածաշրջանի նկատմամբ առկա աշխարհաքաղաքական համակ ուշադրությամբ, հյուսիս-հարավ և արևմուտք-արևելք ճանապարհային խաչմերուկում գտնվելու հանգամանքով:

Abstract – The issues of settlement distribution and population dynamics in the Meghri region have both socio-economic and geopolitical significance. Beginning in the twenties of the twentieth century and to this day, about 50% of the settlements that have formed in the Meghri region, due to various factors, were replenished by a series of abandoned settlements. There are several main reasons: 1. the enlargement of villages during the Soviet years, 2. the rapid development of the mining industry, 3. poor cultural and living conditions, the absence of an active cultural life, 4. partially natural disasters (earthquakes, landslides, mudslides, erosion processes), 5. depletion of biodiversity, reduction of forest areas, land degradation, 6. improper organization of agricultural work, overgrazing of pastures, violation of irrigation norms, 7. environmental ecology, high radiation background. These abandoned settlements are Bughakar, Vank, Kaler, Malev, Aryevik, Apkez, Mulk, Amrakar, Taghamir, Tey, Tos, Mnashu, Pushkag, Ernadzor, Marzkit and Teghut. Currently there are 15 settlements: two cities (Agarak and Meghri) and 13 villages (Alvank, Gudemnis, Legvaz, Lichk, Kartchevan, Kuris, Nrnadzor, Shvanidzor, Vahravar, Tashtun, Vardanidzor, Tkhkut, Aygedzor). The importance of these settlements is now further emphasized by the current geopolitical focus on the Meghri region, conditioned by its ancient location at the crossroads of north-south and west-east roads.

Аннотация – Вопросы расселения и динамика населений в Мегринском регионе имеют как социально-экономическое, так и геополитическое значение. Начиная с двадцатых годов XX века и по сей день около 50% населенных пунктов в этом регионе, в силу различных факторов, пополнили ряды заброшенных поселений. Есть несколько основных причин: 1. укрупнение сел в советские годы, 2. бурное развитие горнодобывающей промышленности, 3. плохие культурно-бытовые условия, отсутствие активной культурной жизни, 4. частично – стихийные бедствия (землетрясения, оползни, сели, эрозионные процессы), 5. нарушение биоразнообразия, сокращение лесных площадей, деградация почв, 6. неправильная организация сельскохозяйственных работ, перевыпас пастбищ, нарушение норм орошения, 7. экология окружающей среды, высокий радиационный фон. К этим заброшенным поселениям относятся: Бугакар, Ванк, Калер, Малев, Аревик, Апкез, Мульк, Амракар, Тагамир, Тей, Тос, Мнашу, Пушкаг, Эрнадзор, Марзкит и Техут. В настоящее время насчитывается 15 населенных пунктов: два города (Агарак и Мегри) и 13 сел (Алванк, Гудемнис, Легваз, Личк, Карчеван, Курис, Нрнадзор, Шванидзор, Вахравар, Таштун, Варданидзор, Тхкут, Айгедзор). На сегодняшний день важность этих поселений особо подчеркивается в связи с нынешним геополитическим вниманием к Мегринскому региону, его расположением на перекрестке дорог север-юг и запад-восток.

Հիմնաբառեր – Մեղրի, տարածաշրջան, բնակավայրեր, շարժընթաց, գոտիավորում:
Keywords – Meghri, region, settlements, dynamics, zoning.
Ключевые слова – Мегри, регион, поселения, динамика, зонирование.

Ներածություն

Մեղրիի տարածաշրջանի լքված և գործող բնակավայրերը տեղաբաշխված են հիմնականում Մեղրի և Արաքս գետերի հովիտներում՝ ցածրադիր հատվածներից տարածվելով լեռնալանջերն ի վեր: Դրանք ունեն բաշխվածության հետևյալ պատկերը (տե՛ս քարտեզը):



Նկար 1. Մեղրիի տարածաշրջանի լքված և գործող բնակավայրերի քարտեզ

x – լքված բնակավայրեր, o – գործող բնակավայրեր

Մեղրիի տարածաշրջանում, որն ինքնատիպ է իր կլիմայական պայմաններով, ռելիեֆի բազմազանությամբ, հիպսոմետրիկ նիշերի մեծ տարբերությամբ, լանդշաֆտների վերընթաց գոտիականությամբ, բնակավայրերը կառուցվել են 600-ից մինչև 2000 մ բացարձակ բարձրությունների վրա՝ հաշվի առնելով գետերի և աղբյուրների հարևանությունը, իշխող քամիների ուղղությունը, ինչպես նաև տեղանքի պաշտպանական հնարավորությունները: Մեղրիի տարածաշրջանի բնակավայրերի տեղաբաշխման և բնակչության շարժընթացի հիմնահարցերի վերլուծությամբ պարզ է դառնում, որ տարածքների համաչափ զարգացման խնդիրները լուծելիս հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել ռազմավարական մեծ նշանակությամբ օժտված, 664 կմ^2 տարածքով այս հարավային լեռնակողզու բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրներին, բնակավայրերի կառուցապատման և ամրացման, լքված բնակավայրերի վերականգնման ծրագրերի իրականացմանը: ՀՀ գյուղական բնակավայրերն ու բնակչությունը, այդ թվում և Մեղրիի տարածաշրջանի, ձևավորվել են պատմական և քաղաքական որոշակի իրադարձությունների հետևանքով՝ կրելով ժամանակի կնիքը, որը նշում են նաև որոշ հեղինակներ (Ավետիսյան 1987, 19; Պոտոսյան 2017, 110):

Դիտարկումներ և վերլուծություն

Դիտարկելով լքված բնակավայրերի պատկերը՝ պարզ է դառնում, որ դրանց բնակիչները տեղափոխվել են հիմնականում Ագարակ արդյունաբերական կենտրոն կամ Մեղրի քաղաք, մասամբ էլ՝ հարևան առավել բարեկեցիկ գյուղեր: Ազդել են ինչպես աշխարհագրական և սոցիալ-տնտեսական, այնպես էլ մարդածին գործոնները (տե՛ս աղյուսակ N 1) (Ավագյան 2001, 82, Հակոբյան 1991, 784):

Լքված բնակավայրերի վիճակը հուշում է, որ այսօր անհրաժեշտ է խթանել հատկապես սահմանամերձ գյուղական բնակչության աճը՝ կիրառելով արտոնությունների լայն համակարգ՝ փոքր բիզնեսի, կրթության, բժշկության, մշակույթի, զբոսաշրջության և ռազմական գործի ոլորտներում:

Այսօր գործող բնակավայրերը ևս ունեն հիմնախնդիրներ՝ պայմանավորված տարբեր գործոններով:

Դրանք մշտական աշխատատեղերի բացակայությունն են գյուղական համայնքներում, մշակութային ակտիվության պակասը, կապի ժամանակակից միջոցների ոչ լրիվ հասանելիությունը, գյուղատնտեսական հումքի մշակման հնարավորությունների թերի լինելը: Հարյուրամյակի վերջին 50 տարիները բերեցին նրան, որ լեռնահանքային արդյունաբերության զարգացման հետ փոփոխվեց նաև բնակչության կառուցվածքը: Տարեցտարի ավելացավ քաղաքային բնակչության թիվը: Ներկայումս տարածաշրջանի 10,5 հազ. մարդուց մոտ 8,6 հազ.-ը բնակվում է Ագարակ և Մեղրի քաղաքներում: Ուրբանիզացման մակարդակը բավական բարձր է: Տարբեր հեղինակների, տեղեկատուների, վիճակագրական տվյալների և բառարանների տվյալներով մեր կազմած աղյուսակը որոշ պատկերացում է տալիս վերջին հիսուն տարիներին Մեղրիի տարածաշրջանում բնակչության շարժընթացի փոփոխությունների վերաբերյալ (տե՛ս աղյուսակ N 2) (Պոտոսյան 2022, 157, Ալեքսանյան 2022, 55, Պոտոսյան 2017, 457–458, Ավագյան 2001, 82):

Ինչպես երևում է աղյուսակից, մեր օրերում էլ Մեղրիի տարածաշրջանի Այգեձոր գյուղն աստիճանաբար լքվել է, որի պատճառը ոսկու արդյունահանման գործարանի աշխատանքի դադարեցումն էր: Բնակչության քանակի հետ կապված խնդիրներ ունեն Կուրիս, Գուդեմնիս, Վահրավար և Թխկուտ բնակավայրերը:

Այսօրվա բնակավայրերը կարելի է խմբավորել ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրությունների՝ առանձնացնելով մերձարաքսյան հովտային գոտին (I), միջին գոտին (II) և բարձրլեռնային հատվածը (III): Գյուղերի գտնվելու վայրերը և բնույթը կարևոր դեր են խաղում դրանց մասնագիտացման ուղղությունները, սոցիալ-տնտեսաաշխարհագրական և տրանսպորտային հաղորդակցության հնարավորությունները ճիշտ կազմակերպելու հարցում (տե՛ս աղյուսակ N 3) (Ավագյան 2001, 82):

Աղյուսակ N 1

Մեղրիի տարածաշրջանի լքված բնակավայրերի բնակչության շարժընթացը և լքման պատճառները

Լքված բնակավայրերի բարձրությունը (մ)	1926թ	1939թ	1959թ	լքման պատճառը
Ափկեզ - 1650 մ	255	209	141	գյուղերի խոշորացում, լեռնահանքային արդյունաբերություն, էրոզիոն պրոցեսներ
Ամրաքար - 1100 մ	48	68	19	գյուղերի խոշորացում, լեռնահանքային արդյունաբերություն, սելավներ
Արևիք - 1500 մ	135	-	139	գյուղերի խոշորացում, լեռնահանքային արդյունաբերություն, սելավներ
Բուղաքար - 1580 մ	30	30	լքվել է 1940-ա-կան թթ.	լեռնահանքային արդյունաբերություն, անտառների կրճատում, սելավներ
Էրնաձոր - 1850 մ	221	174	32	կուլտուր-կենցաղային վատ պայմաններ, լեռնահանքային արդյունաբերություն
Վանք - 1800 մ	392	54	186	գյուղերի խոշորացում, անտառների կրճատում, արոտավայրերի գերարածեցում
Մուլք - 1700 մ	101	77	լքվել է 1940-ական թթ.	լեռնահանքային արդյունաբերություն, սելավներ
Մալև - 890 մ	-	-	լքվել է 1950-ական թթ.	սելավներ, էրոզիա, անտառների կրճատում
Կալեր - 2000 մ	-	275	185	գյուղերի խոշորացում, արոտավայրերի գերարածեցում
Թաղամիր -1890 մ	-	75	լքվել է 1940-ական թթ.	սելավներ, լեռնահանքային արդյունաբերություն,
Թեյ - 1480 մ	-	80	լքվել է 1940-ական թթ.	հողերի դեգրադացիա, սելավներ, լեռնահանքային արդյունաբերություն
Թոս - 850 մ	-	լքվել է 1930-ական թթ.	տեղափոխվել է Շվանիձոր գյուղ	գյուղերի խոշորացում
Մնաշու – 900 մ	-	լքվել է 1930-ական թթ.	տեղափոխվել է Լեհվազ գյուղ	գյուղերի խոշորացում
Փուշկագ - 1665 մ	-	այժմյան Այգե-ձորն է, որը ևս լքվել է	-	գյուղերի խոշորացում
Մարզկիթ - -	29	լքվել է 1930-ական թթ.	-	տեղափոխվել է Շվանիձոր գյուղ
Թեղուտ - 554 մ	-	193	լքվել է 1940-ական թթ.	տեղափոխվել է Շվանիձոր գյուղ

Աղյուսակ N 2

Մեղրիի տարածաշրջանի բնակչության շարժը՝ ըստ բնակավայրերի

Բնակավայրեր	Բնակչության թիվը			
	1968	1988	1999	2020
1. Մեղրի	4037	4900	5600	4487
2. Ագարակ	2786	4800	5100	4122
3. Ալվանք	843	555	376	255
4. Գուդեմնիս	233	52	98	35
5. Լեհվազ	932	845	604	556
6. Լիճք	532	388	205	117
7. Կարճևան	525	374	373	218
8. Կուրիս	296	137	113	34
9. Նռնաձոր	1197	1158	118	128
10. Շվանիձոր	763	544	370	241
11. Վահրավար	210	78	70	30
12. Տաշտուն	375	254	190	103
13. Վարդանիձոր	522	357	201	156
14. Թխկուտ	222	85	70	53
15. Այգեձոր	-	29	15	0
Ընդամենը՝	13473	14556	13502	10535

Աղյուսակ N 3

Մեղրիի տարածաշրջանի բնակավայրերի խմբավորումը

Բնակավայրեր	Ըստ գոտիների	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Բնակավայրերի բաշխման բնույթը
1. Մեղրի	I	620	սահմանամերձ
2. Ագարակ	I	660	սահմանամերձ
3. Ալվանք	I	670	սահմանամերձ
4. Գուդեմնիս	II	1400	սահմանամերձ
5. Լեհվազ	I	900	սահմանամերձ
6. Լիճք	III	1780	լեռնային սահմանամերձ
7. Կարճևան	I	920	սահմանամերձ
8. Կուրիս	II	1365	սահմանամերձ
9. Նռնաձոր	I	650	սահմանամերձ
10. Շվանիձոր	I	640	սահմանամերձ
11. Վահրավար	II	1380	սահմանամերձ
12. Տաշտուն	III	1950	լեռնային սահմանամերձ
13. Վարդանիձոր	II	1050	սահմանամերձ
14. Թխկուտ	II	1200	սահմանամերձ
15. Այգեձոր	II	1665	սահմանամերձ

Եզրակացություններ

Ուսումնասիրության և տվյալների վերլուծության շնորհիվ հանգել ենք մի շարք եզրակացությունների և կատարել առաջարկություններ.

1. Մեղրիի տարածաշրջանում բնակավայրերի լքման բազմաթիվ պատճառների մեջ առաջնային են եղել երկուսը՝ գյուղերի խոշորացումը խորհրդային տարիներին և լեռնահանքային արդյունաբերության բուռն զարգացումը, որը բնակչության արտահոսք առաջացրեց գյուղերից դեպի պղնձամոլիբդենային

կենտրոն Ագարակ և գյուղատնտեսական հումքի մշակման կենտրոն Մեղրի: Այսօր էլ այդ միտումը տարբեր դրսևորումներով առկա է:

2. Ըստ հիպսոմետրիկ նիշերի՝ Մեղրիի տարածաշրջանում առավելապես լքվել են այն գյուղերը, որոնք ընկած են 1000–2000 մ բացարձակ բարձրությունների վրա: Ըստ լանդշաֆտի առանձնահատկությունների՝ դրանք լեռնաանտառային գոտու բնակավայրերն են, որոնց լքման պատճառ են դարձել անտառների հատումը, կենսաբազմազանության աղքատացումը, շրջակա միջավայրի խաթարումը և աղտոտումը լեռնահանքային արդյունաբերության թափոններով:

3. Կարևոր է գյուղատնտեսական շրջանացումից դուրս մնացած և տարբեր պատճառներով չմշակվող վարելահողերի և այլ հողատեսքերի օգտագործումը արտադրության մեջ՝ կիրառելով մելիորատիվ միջոցներ: Ինչպես նաև անհրաժեշտ են խելացի մսաբրդատու անասնապահության կազմակերպումը և ֆինանսավորումը:

4. Նկատելի է, որ լքված և գործող բնակավայրերի մեծամասնությունն ընկած է Մեղրի գետի և նրա վտակների ափերին՝ գործող ճանապարհների հարևանությամբ:

5. Անհրաժեշտ է վերականգնել Մեղրիի տարածաշրջանի կլիմայական պայմանները բավարարող բամբակենու մշակությունը՝ գյուղերում լրացուցիչ աշխատատեղեր ստեղծելու հեռանկարով: Ժամանակին Մեղրիի երկարաթել բամբակը և բոժոժը մեծ արժեք ու պահանջարկ են ունեցել Ռուսաստանի և Իրանի շուկաներում:

6. Անհրաժեշտ է զարգացնել նաև հայկական գյուղին բնորոշ ավանդական զբաղմունքների ոլորտը՝ փորձելով օգտվել այդ անտեսված պաշարների արդյունքներից: Այդ ոլորտի մեջ մտնում են երկրագործությունը, անասնապահությունը, որսորդությունը, այգեգործությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը, հավաբուծությունը, տնայնագործությունը, գուլպայագործությունը, գորգագործությունը, ջուլիակությունը, կաշեգործությունը, փայտագործությունը, ոսկերչությունը, բրդի մշակումը, կաթնատնտեսությունը, որոնցով Մեղրիի տարածաշրջանը կարող է խթանել այս տիպի գործարարությունը՝ գյուղերին տալով զարգացման հնարավորություններ:

7. Լքված բնակավայրերի գոնե մի մասի վերականգնումը, գործող բնակավայրերի շենացումը Մեղրիի տարածաշրջանում կարելի է իրականացնել լեռնահանքային արդյունաբերության շնորհիվ առաջացած հսկայական գումարների ներդրման միջոցով՝ նպաստելով գյուղերում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ձևավորմանը, վերականգնմանը և զարգացմանը: Հարցը պահանջում է պետական լուրջ մոտեցում, համակարգված ծրագրերի իրականացում, քանզի Մեղրիի տարածաշրջանն այսօր, ավելի քան երբևէ, կարևորվում է պետության և պետականության ամրապնդման ու հարատևության առումով: Եվ նրա բնակավայրերի զարգացմանը նպաստելը խիստ արդիական խնդիր է:

Շնորհակալական

Այս հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար տեղեկությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում ԵՊՀ դոցենտ,

աշխ. գիտ. թեկնածու Ակսել Հարությունի Պոտոսյանին, իսկ տեխնիկական աջակցության համար՝ ԵՊՀ ավագ լաբորանտ Անի Հարությունի Ալանյանին:

Գրականություն/References/Литература

1. Ալեքսանյան Կ.Բ. 2022, Բնակավայրերի տեղաբաշխման և բնակչության շարժընթացի աշխարհագրական հիմնահարցերը Մեղրիի տարածաշրջանում, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր (բնական գիտություններ), N 1/42, 50–57:
   Aleksanyan K.B. 2022, Geographical Issues of Settlement Distribution and Population Movement in the Meghri Region, ASPU Scientific Bulletin (Natural Sciences), N 1/42, 50–57 (in Armenian).
2. Ավետիսյան Խ.Ա. 1987, ՀԽՍՀ բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ.:
   Avetisyan Kh.A. 1987, Geography of the Population and Settlements of the Armenian SSR, Yerevan, Publishing House of NAS RA (in Armenian).
3. Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1986-2001, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (հ. 1–5), Երևան, ԵՊՀ հրատ.:
   Hakobyan T.Kh., Melik-Bakhshyan St., Barseghyan H. 1986–2001, Dictionary of Toponyms of Armenia and Adjacent Regions (vol. 1–5), Yerevan, YSU Press (in Armenian).
4. Հայկական ՍՍՀ բնակավայրերի տեղեկատու 1968, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 232–238:
   Directory of Settlements of the Armenian SSR 1968, Yerevan, Publishing House of NAS RA, 232–238 (in Armenian).
5. ՀՀ բնակավայրերի ատլաս (խմբ.՝ Գ. Ավագյանի) 2001, Երևան, ՀՀ գյուղատնտեսության նախարարության հրատ.:
   Atlas of Settlements of the Republic of Armenia (ed. G. Avagyan) 2001, Yerevan, Publishing House of the Ministry of Agriculture RA (in Armenian).
6. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով (վիճակագրական ժողովածու) 2020, Երևան:
   Regions of RA and Yerevan City in Numbers (Statistical Collection) 2020, Yerevan (in Armenian).
7. Պոտոսյան Ա.Հ. 2017, ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Potosyan A.H. 2017, The Rural Population and Settlements of the Republic of Armenia, Yerevan, YSU Press (in Armenian).
8. Պոտոսյան Ա.Հ. 2022, ՀՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
   Potosyan A.H. 2022, Economic and Social Geography of the Republic of Armenia, Yerevan, YSU Press (in Armenian).